

--- **Քաղաքաշինական բաց հարթակ** ---

Տիգրան Պողոսյան. «Տիգաշին» ՍՊԸ հիմնադիր տնօրեն

Բաց օղակ ունենք. Վարպետներ պատրաստում է միայն շինհրապարակը

Անցումային տարիներին միջին մասնագիտական կրթության անտեսումն այսօր բերել է վակուումի: Ավագ սերնդի վարպետների մի մասը հեռացել է, մյուս մասը՝ այլ երկրներում է աշխատում, իսկ միջին մասնագիտական օղակները կաղում են:

Այսօր վարպետներ պատրաստում է միայն շինհրապարակը: Իսկ դա երկար տարիներ է պահանջում, բացի այդ ոչ բոլոր ընկերություններում են բարձրակարգ վարպետներ աշխատում և աշխատանքի նկատմամբ ոչ բարեխիղճ մոտեցումը կարող են փոխանցել երիտասարդ կադրերին:

Եղած կրթական հաստատություններում էլ վկայագիր չեն տրվում միջին մասնագիտական օղակների շատ մասնագիտացումների: Այսօր շինարարական ընկերությունները կարող են փաստել. Չկա դպրոց, որտեղից կարող է կադրեր ընտրել:

Աշխատաշուկայում մեծ է միջին մասնագիտական կրթություն ունեցող, բարձր որակավորում ունեցող վարպետների պահանջը: Անցումային տարիներին մենք հնարավորություն չունեցանք շինարար-վարպետներին բավարար քանակով փոխարինողների: Սակայն մեղքը միայն կրթական հաստատությունների վրա պետք չէ բարդել: Իրենց դերն ունեն խոշոր շինարարական կազմակերպություններն ու կառույցները, որոնք կարող են կիրառել աշխարհում ընդունված մոդելը. Վճարել շնորհալի ուսանողի ուսման արժեքը և պահանջել անհրաժեշտ չափանիշներին համապատասխան մասնագետ: Սա կարող է որոշակի փոփոխություններ մտցնել նաև կրթական համակարգի ծրագրերի, առհասարակ քաղաքականության մեջ:

Պետք է նշել նաև, որ անգամ բուհում պատրաստվող մասնագետները պրակտիկ շինարարությունից հեռու են: Մենք ունենք այդ խնդիրը:

Առաջարկում եմ բացել շինարարական ուսումնարան, օրինակ՝ որևէ արտադրամասի տարածքում, որտեղ միջին մասնագիտական, ինչուի է՝ նաև բարձրագույն կրթություն ստացող ուսանողները կկարողանան մասնակցել պրակտիկ շինարարությանը, տիրապետել նեղ մասնագիտական հմտություններին: